Digitally signed by
SIMONYAN ANAHIT 6109790109
Date: 30.06.2025 13:05:50

Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 26-05-2025 թ. որոշմամբ
«ԵՐԵՎԱՆՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
հիմնադրամի 2024 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ԵՐԵՎԱՆՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍ Ե. ՉԱՐԵՆՑԻ ՓՈՂՈՑ 31/4 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ
1.3 Պետական գրանցման համարը		222.160.1241080
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2022-05-31
1.5 ՀՎՀՀ-ն		02300612
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)94578057
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		yerevancenter.org
1.8 Էլեկտրոնային փոստը		info@yerevancenter.org
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
Աննա Հովհաննիսյան		
Կովկասի Ինստիտուտ հիմնադրամ		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
Ստիվեն Ըրլ Հենսոն		
Եկատերինա Պրավիլովա		
Կեվին Մերքեր Ֆորսայթ Պլետտ		
Ռեյչլ Անե Պոլոնսկի		
Ալեքսանդր Իսկանդարյան		
Գեորգի Դերլուգյան		
Նատալիա Մազուր		
Ռոբերտ Սասսոն		
Օլգա Բիչկովա		
Օլեգ Խարխորդին		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Ժաննա Կորմինա		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	9	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը		
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ		
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը

8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
	ՆՁԱԿ ՊՈԱԿ (Փոխհատուցում բարձր որակավորում ունեցող մասնագետների աշխատավարձի մասով)	3,235,310
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Նվիրատվություն	113,853,752
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	Նվիրատվություն	450,000
	Կրթական ծրագրերի կազմակերպում	6,042,277
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ		
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Սոցիալական և հումանիտար գիտությունների ոլորտում հանրային միջոցառումների կազմակերպում	7,777,648	
«Ծրագրավորում և քանակական մեթոդներ ոչ տեխնիկական մասնագիտությունների համար» կրթական ծրագրի 2-րդ և 3-րդ կրկնություն	8,458,548	
«Օգտատերերի սոցիալական հետազոտություններ UX և STS» կրթական ծրագիր	3,368,480	
«Քաղաքական փոփոխությունները հետխորհրդային Եվրասիայում» կրթական ծրագիր	3,875,375	
«Սոցիալական և քաղաքական հետազոտությունների մեթոդաբանությունն ու պրակտիկան» կրթական ծրագիր	3,877,355	
«Վերլուծական ընթերցանություն սոցիալական և հումանիտար ոլորտի հետազոտողների համար» կրթական ծրագիր	5,974,828	
«Պառակտված հասարակություններ ու մշակույթներ. կոնֆլիկտ և համագործակցություն» ամառայի դպրոց	24,893,541	
Մարդաբանության ծրագիր	9,217,460	
Գիտաշխատողների գիտական հրապարակումների ծրագիր	21,229,122	

«Անորոշության մարդաբանություն. կյանքը շրջադարձային ժամանակներում» միջազգային գիտաժողով	14,239,773
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	150,995,998
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	102,912,130

Նշումներ՝

Կատարվել են ծախսեր հետևյալ ձեռնարկատիրական գործունեության շրջանակում՝ կրթական ծրագրերի կազմակերպում և իրականացում՝ 6,042,277 ՀՀ դրամ: Վարչական ծախսերը կազմել են՝ 42,041,591 ՀՀ դրամ:

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ ____16____ էջերից:

էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Ֆինանսական հաշվետվություններ և

Անկախ աուդիտորական եզրակացություն

“Երևանյան միջազգային կրթության կենտրոն”

հիմնադրամ

31 դեկտեմբերի 2024թ.

Բովանդակություն

	Էջ
Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	5
Համապարփակ Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	6
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	7
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	8

"Ֆոր Էյ Քասալթինգ" ՓԲԸ "Four A Consulting" CJSC

audit accounting advisory assurance

ՀԱՊ ՀԿ Ռեեստր 1 20 0219 CAA NGO Register 1 20 0219
Հասցե Նալբանդյան 50/136 , ք Երևան ՀՀ, www. 4aconsulting.am Address Nalbandyan 50/136, Yerevan, RA
Հեռախոս +374(10) 52 08 47 info@4aconsulting.am Telephone +374(10) 52 08 47

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

« Երևանյան միջազգային կրթության կենտրոն » հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին,

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Երևանյան միջազգային կրթության կենտրոն» Հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2024թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով տալիս են Հիմնադրամի 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքի և դրամական միջոցների հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն փոքր եւ միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտին (այսուհետ՝ ՓՄԿ-ների ՖՀՄՍ):

Կարծիքի հիմք

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ "Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար" բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար, որոնք տալիս են ճշմարիտ և իրական պատկեր ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի համաձայն, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Հիմնադրամը լուծարելու կամ Հիմնադրամի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլ ընտրանք:

Կառավարման լիազոր անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:
ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում.
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը:

Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

Կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին::

22 ապրիլի 2025թ.

Անիկ Մարտիրոսյան
Տնօրեն-Բաժնետեր/
Աուդիտի ղեկավար

«ՀՈՐ ԷՅ ԽՈՒՍԱՓԻՆ» ՍՊԸ
"FOUR A CONSULTING"
00148693

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	1,909	3,866
Ոչ նյութական ակտիվներ	5	1,757	1,967
Հետաձգված ծախսեր		200	-
		3,866	5,833
Ընթացիկ ակտիվներ			
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	6	360	1,217
Դրամական միջոցներ	7	10,444	38,952
		10,804	40,169
Ընդամենը ակտիվներ		14,670	46,002
Զուտ ակտիվներ		-	-
		-	-
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	8	-	5,833
		-	5,833
Ընթացիկ պարտավորություններ			
Եկամուտներին վերաբերող շնորհներ	8	6,904	35,392
Կրեդիտորական պարտքեր	9	2,769	2,203
Արձակուրդի գծով պահուստ		4,997	2,419
Շահութահարկի գծով պարտավորություններ		-	155
		14,670	40,169
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		14,670	46,002

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2025թ. ապրիլի 22-ին՝

Ժաննա Տորոսինա
Տնօրեն

Անահիտ Սիմոնյան
Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 8-ից մինչև 16-րդ էջերում ներկայացված ծանոթագրությունների հետ միասին

Ֆինանսական արդյունքների և չբաշխված շահույթների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2024թ. դեկտեմբրի 31-ինավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ինավարտված տարի
Հասույթ		6,144	4,671
Շնորհից եկամուտ	8	151,860	137,632
Այլ եկամուտներ		7	-
Աշխատակիցներին հատուցումներ		(87,965)	(75,752)
Մաշվածություն և ամորտիզացիա		(2,206)	(3,848)
Ծրագրերի իրականացմանն ուղղված ծախսեր		-	(14,008)
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր		(923)	(7,650)
Մարկետինգի և գովազդի ծախսեր		(192)	(778)
Գրասենյակային և կոմունալ ծախսեր		(1,595)	(1,443)
Դասընթացների կազմակերպման գծով ծախսեր		(27,816)	-
Վարձակալության գծով ծախս		(6,300)	(5,980)
Աուդիտորական և խորհրդատվական ծախսեր		(5,755)	(10,599)
Ծառայությունների մատուցման ուղղված ծախսեր		(12,958)	(3,146)
Չփոխհատուցվող հարկերից ծախսեր		(10)	(3,682)
Պահուստներ		(2,578)	(1,688)
Այլ ծախսեր		(9,390)	(12,191)
Գործառնական գործունեությունից եկամուտ /ծախսեր		323	1,538
Փոխարժեքային տարբերությունից վնաս (շահույթ)	10	(323)	(1,383)
Ֆինանսական եկամուտ/ ծախսեր, զուտ		-	-
Շահույթ մինչև հարկումը		-	155
Շահութահարկի գծով ծախս		-	(155)
Տարվա արդյունք		-	-

Հազար դրամ	Կուտակված արդյունք	Ընդամենը
2023թ. հունվարի 1-ի դրությամբ՝	–	–
Տարվա արդյունք	–	–
2023թ. դեկտեմբերի 31ի դրությամբ	–	–
Տարվա արդյունք	-	-
2024թ. դեկտեմբերի 31ի դրությամբ	-	-

ֆինանսական արդյունքների և չբաշխված շահույթների մասին մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 8-ից մինչև 16-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա արդյունք		-
Ճշգրտումներ՝		
Շահութահարկ	-	155
Մաշվածություն և ամորտիզացիա	2,207	3,848
Շնորհից եկամուտ	(151,860)	(137,632)
Պահուստի ծախս	2,578	1,688
Փոխարժեքային տարբերությունից շահույթ/վնաս	323	1,383
Գործառնական շահույթ նախքան շրջանառու կապիտալի փոփոխություններ	(146,752)	(130,558)
Պաշարների փոփոխություն		-
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն	857	(480)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	566	1,566
Գործառնական գործունեությունից ստացված/ օգտագործված դրամական միջոցներ	(145,329)	(129,472)
Վճարված շահութահարկ	(155)	-
Գործառնական գործունեությունից ստացված/ օգտագործված զուտ դրամական միջոցներ	(145,484)	(129,472)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(240)	(5,961)
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(240)	(5,961)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ակտիվներին/եկամուտներին վերաբերող շնորհներ	117,539	125,866
Ֆինանսական գործունեության համար ստացված/օգտագործված զուտ դրամական միջոցներ	117,539	125,866
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ նվազում/աճ	(28,185)	(9,567)
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	(323)	(1,544)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա սկզբում	38,952	50,063
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջում	10,444	38,952

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 8-ից մինչև 16-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

Համաձայն հիմնադրամի 13.08.2024թ.-ի փոփոխված կանոնադրության "ՍՊԵՀ միջազգային կրթության կենտրոն " հիմնադրամի անվանումը փոփոխվել է դառնալով «Երևանյան միջազգային կրթության կենտրոն» հիմնադրամ:

«Երևանյան միջազգային կրթության կենտրոն» հիմնադրամը գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից 2022թ. մայիսի 31-ին:

Հիմնադրամը շահույթ չհետապնդող կազմակերպություն է, որի հիմնական նպատակն է՝

- Գիտական հետազոտությունների իրականացում ,
- Կրթական և հետազոտական խորհրդատվությունների տրամադրում ,
- Մեթոդական ,տեղեկատվական և այլ տպագիր նյութերի գրքերի հրատարակում և այլն:

Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը բաղկացած է 10 անդամից: Խորհրդի գործող կազմը ներակայցված է ստորև.

Խորհուրդի նախագահ- Պոլոնսկի Ռեյչլ Անե,
Խորհուրդի անդամ -Ալեքսանդր Իսկանդարյան,
Խորհուրդի անդամ- Գեորգի Մատվեյի Դերլուգյան,
Խորհուրդի անդամ- Պլետտ Կեվին Մերքեր Ֆորսայթ,
Խորհուրդի անդամ- Պրավիլովա Եկատերինա Անատոլիի,
Խորհուրդի անդամ- Հենսոն Ստիվեն Ըրլ ,
Խորհուրդի անդամ- Վիլյամ Ռոզենբերգ,
Խորհուրդի անդամ -Սիմոն Ֆրանկլին,
Խորհուրդի անդամ- Վալերի Պոզներ,
Խորհուրդի անդամ- Սասսոն Ռոբերտ:

2024թ. հիմնադրամի աշխատակիցների միջին թվաքանակը կազմել է 6 մարդ (2023թ. 7 մարդ):

Հիմնադրամի հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Չարենցի փողոց 31/4:

2. Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են փոքր եւ միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտին (այսուհետ՝ ՓՄԿ-ների ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից:

Ներկայումս ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ը չեն պարունակում հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ հատուկ ուղեցույցներ՝ շահույթ չհետապնդող կազմակերպությունների համար: Եթե ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ն չի տալիս ուղղություն շահույթ չհետապնդող ոլորտի կազմակերպություններին հատուկ գործարքների հաշվառման համար, ապա հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է հիմնվի ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի ընդհանուր սկզբունքների վրա՝ համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) 'Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հիմքերի:

2.2 Ճանաչման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք ներկայացված են ներկա արժեքով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է("դրամ"), որն էլ հանդիսանում է Հիմնադրամի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույն կերպով է արտացոլում ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Հիմնադրամի գործարքների տնտեսական էությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ ղեկավարության համոզմամբ այս արժույթն առավել օգտակար է Հիմնադրամի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Հիմնադրամի ղեկավարությունը կատարի կարևոր գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Կազմակերպության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի ("ՀՀ ԿԲ") կողմից սահմանված հաշվարկային միջին փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվեփակման ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով հաշվեփակման ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից սահմանված հաշվարկային միջին փոխարժեքը.

Ստորև ներկայացված են ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված միջին փոխարժեքները.

	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ԱՄՆ դոլար	396.56	404.79
Ռուբլի	3.71	4.50

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

3.2 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումները: Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Համակարգչային տեխնիկա	-	1 տարի
Գրասենյակային գույք	-	8 տարի:

3.3 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Հիմնադրամի կողմից և ունեն օգտակար ծառայության ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:
Ամորտիզացիան ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, որը կազմում է 10 տարի:

3.4 Շնորհներ

Շնորհները, ներառյալ ոչ դրամային շնորհները՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում են որպես հետաձգված եկամուտ:
Շնորհը ճանաչվում է որպես եկամուտ՝ սիստեմատիկ եւ ռացիոնալ հիմունքով, ակտիվի օգտակար ծառայության ընթացքում:
Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերմանը վերաբերող շնորհները ներառվում են ոչ ընթացիկ պարտավորություններում եւ ճանաչվում են որպես եկամուտ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում գծային մեթոդով՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ընթացքում:

3.5 Հատուցումներ աշխատակիցներին

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները ներառում են աշխատավարձերը, կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները (ինչպիսիք են, օրինակ, վճարովի տարեկան արձակուրդները և հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդները) և պարգևավճարները:

3.6 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Հիմնադրամը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:
Ֆինանսական ակտիվները ապաճանաչվում են, երբ ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները լրանում են, կամ երբ ֆինանսական ակտիվները և բոլոր նշանակալից ռիսկերը և հատուցումները փոխանցվում են:
Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, ենթակա չեն վճարման, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգում և սկզբնական չափում

Ֆինանսական ակտիվները բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ,
- փոխառություններ և դեբիտորական պարտքեր:

Ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ վերագրվում են տարբեր կատեգորիաների՝ կախված գործիքի բնույթից և նպատակից: Ֆինանսական գործիքի կատեգորիան համապատասխանեցվում է այն սկզբունքին, որով չափվում է տվյալ գործիքը և այն հանգամանքին, թե արդյոք առաջացող եկամուտը և ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Ֆինանսական ակտիվների հետ կապված բոլոր ծախսերը և եկամուտները որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, ներկայացվում են "Ֆինանսական ծախս", "Ֆինանսական եկամուտ" կամ "Այլ ֆինանսական արդյունքներ" հոդվածներում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որը ներկայացվում է "Այլ ծախսեր" հոդվածում:

i. Փոխառություններ և դեբիտորական պարտքեր

Փոխառություններն ու դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են, որոնք չեն գնանշվում ակտիվ շուկայում և ներառում են

առևտրային և այլ դեբիտորական պարտքերը, ինչպես նաև մնացորդները դրամարկղում և բանկերում:

ii. Դեբիտորական պարտքեր

Ընթացիկ դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Հետագայում դրանք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ հանած արժեզրկման պահուստը: Առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստը ստեղծվում է այն ժամանակ, երբ առկա է օբյեկտիվ ապացույց, որ Հիմնադրամը սկզբնապես սահմանված ժամկետներում չի կարող հավաքագրել վերադարձման ենթակա բոլոր գումարները: Դեբիտորի զգալի ֆինանսական դժվարությունները, վճարման հետաձգումը և վճարումների ուշացումները ցուցանիշ են այն բանի, որ առևտրային դեբիտորական պարտքն արժեզրկված է: Պահուստի գումարը ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերությունն է:

Պահուստի մնացորդը ճշգրտվում է հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասինհաշվետվությունում՝ ծախսի կամ եկամտի ճանաչման միջոցով: Հաճախորդի հաշվի մնացորդից դուրս գրվող ցանկացած գումար նվազեցվում է առկա կասկածելի դեբիտորական պարտքի պահուստից: Բոլոր դեբիտորական պարտքերը, որոնց հավաքագրումը գնահատվում է անհավանական, դուրս են գրվում:

iii. Մնացորդներ դրամարկղում և բանկերում

Մնացորդները դրամարկղում և բանկերում ներառում են կանխիկ միջոցները, բանկային հաշիվների մնացորդները:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգում և սկզբնական չափում

Հիմնադրամի ֆինանսական պարտավորությունները ներառում են փոխառությունները և այլ կրեդիտորական պարտքերը:

I. Այլ կրեդիտորական պարտքեր

Այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են սկզբնական արժեքով:

3.7 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ, ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

4. Հիմնական միջոցներ

Հազար դրամ	Համակարգչային տեխնիկա	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
Սկզբնական արժեք			
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	718	2,343	3,061
Ավելացում	4,526	185	4,711
Օտարում			
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	5,244	2,528	7,772
Ավելացում	-	40	40
Օտարում			
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	5,244	2,568	7,812

Կուտակված մաշվածություն			
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	129	36	165
Տարվա ծախս	3,442	299	3,741
Օտարում			
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,571	335	3,906
Տարվա ծախս	1,673	324	1,997
Օտարում			
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	5,244	659	5,903
Հաշվեկշռային արժեք			
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,673	2,193	3,866
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	1,909	1,909

5. Ոչ նյութական ակտիվներ

Հազար դրամ	Այլ ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական արժեք		
2023թ. Հունվարի 01-ի դրությամբ	825	825
Ավելացում	800	800
Կապիտալացում	450	450
Օտարում	-	-
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,075	2,075
Ավելացում		
Կապիտալացում		
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,075	2,075
Կուտակված մաշվածություն		
2023թ. Հունվարի 01-ի դրությամբ	1	1
Տարվա ծախս	107	107
Օտարում	-	-
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	108	108
Օտարում	-	
Տարվա ծախս	210	210
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	318	318
Հաշվեկշռային արժեք		
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,967	1,967
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,757	1,757

6. Դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	-	4
Տրված կանխավճարներ	68	1,068
Դեբիտորական պարտքեր հարկերի և այլ վճարների գծով	263	1
Այլ դեբիտորական պարտքեր	29	144
	360	1,217

7. Դրամական միջոցներ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դրամարկղ	-	-
Մնացորդներ բանկերում ՀՀ դրամով	1,880	10
Մնացորդներ բանկերում արտարժույթով	8,407	38,933
Այլ հաշիվներ բանկերում	157	9
	10,444	38,952

8. Ակտիվներին/Եկամուտներին վերաբերող շնորհներ

8.1 Ակտիվներին վերաբերող շնորհներ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Տարեսկզբի մնացորդ	5,833	3,852
Ստացված շնորհներ	-	5,829
Վերադասակարգում	(5,833)	
Շնորհից եկամուտ	-	(3,848)
Տարեվերջի մնացորդ	-	5,833

8.2 Եկամուտներին վերաբերող շնորհներ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Տարեսկզբի մնացորդ	35,392	48,999
Ստացված շնորհներ	117,539	120,177
Վերադասակարգում	5,833	
Շնորհից եկամուտ	(151,860)	(133,784)
Տարեվերջի մնացորդ	6,904	35,392

Հիմնադրամը 2024թ. ընթացքում ստացել է նվիրատվություններ հետևյալ գործընկերներից.

Անվանում	Արժույթ	Գումար	Գումար (հազ. դրամ)
FND European Univ ST PETERBURG	USD	292,940	113,854
Նորամուծության և Ձեռներեցության Ազգային Կենտրոն	ԱՄԴ	-	3,235
ԽԱԴԵՑԱՆ ՄԱՐԻՍՈԼ ԻՎՈՆՆԵ	ԱՄԴ	-	450
Ընդամենը		**292,940**	**117,539**

9. Կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր ստացված ծառայությունների գծով	-	8
Կրեդիտորական պարտքեր հարկերի և այլ վճարների գծով	2,351	1,683
Կրեդիտորական պարտքեր սոց. վճարների գծով	418	512
	2,769	2,203

10. Փոխարժեքային տարբերությունից շահույթ/ վնաս

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Դրամական միջոցներ	(323)	(1,544)
Տրված կանխավճար		(7)
Դեբիտորական պարտքեր	-	39
Կրեդիտորական պարտքեր	-	117
Ստացված կանխավճարներ	-	12
	(323)	(1,383)

11. Ֆինանսական գործիքներ

11.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.4-ում:

11.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ կատեգորիաներին.

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դեբիտորական պարտքեր		
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	-	4
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	10,444	38,953
	10,444	38,957

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններ		
Առևտրային կրեդիտորական պարտքեր	-	8
	-	8

12. Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Հիմնադրամը իր բնականոն գործունեության ընթացքում ենթարկվում է շուկայական (որը ներառում է արտարժութային), պարտքային և իրացվելիության ռիսկերի:

12.1 Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Հիմնադրամի գործունեությունն ուղղակիորեն ենթարկվում է արտարժութային, տոկոսադրույքային ռիսկերի փոփոխությունների ազդեցությանը և կապիտալի գնային ռիսկին (տես՝ բ) ստորև):

բ) Արտարժութային ռիսկ

Հիմնադրամը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Հիմնադրամի գործարքների հիմնական մասն իրականացվում է հայկական դրամով:

գ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Հիմնադրամը ֆինանսական կորուստներ կարող է կրել:

Հաշվետու ամսաթվի դրությամբ նշանակալի պարտքային ռիսկի կենտրոնացում առկա չէ: Առավելագույն պարտքային ռիսկը ներկայացված է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ յուրաքանչյուր ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքով:

դ) Իրացվելիության ռիսկ

Հիմնադրամը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ պահելով բավարար դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, ինչպես նաև բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ ժամանակին գործառնական պարտավորությունները մարելու նպատակով:

13. Պայմանական պարտավորություններ

13.1 Գործարար միջավայր

Հայաստանի Հանրապետությունում շարունակական բնույթ են կրում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները: Որպես զարգացող շուկա, Հայաստանի Հանրապետությունում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում:

13.2 Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում: Հիմնադրամը չունի իր ակտիվների, գործունեության ընդհատման կամ երրորդ կողմերի պարտավորությունների հանդեպ, որոնք կարող են առաջանալ գույքին կամ շրջակա միջավայրին Հիմնադրամի գույքի կամ գործառնությունների պատահարներից հասցված վնասի ապահովագրություն: Քանի դեռ Հիմնադրամը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Հիմնադրամի գործունեության և ֆինանսական դրության վրա:

13.3 Պայմանական հարկային պարտավորություններ

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ պահանջում է մեկնաբանություններ: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ ունեն տարբեր մեկնաբանություններ: Հարկերը ենթակա են վերանայման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք օրենքով լիազորված են առաջադրել տուգանքներ և տույժեր:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանի Հանրապետությունում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ կատարել է համապատասխան հատկացումներ հարկային պարտավորությունների գծով՝

հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իշխանությունների մեկնաբանությունները կարող են տարբերվել:

14. Գործարքներ կապակցված կողմերի միջև

14.1 Վերահսկողություն

Հիմնադրամը վերահսկվում է հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից:

Հիմնադրամի կապակցված կողմերը ներառում են հոգաբարձուների խորհուրդի անդամները, դոնոր ընկերությունները և հիմնական ղեկավար անձնակազմը:

Վարձակալություն

Հազար դրամ

	Ժամանակաշրջանի ընթացքում ստացված վարձակալություն
"Կովկասի ինստիտուտ" հիմնադրամ	6,300
	6,300

14.2 Գործարքներ ղեկավարության հետ

Հիմնադրամի տնօրենը ստացել է հետևյալ վարձատրությունը՝

Հազար դրամ

	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատավարձ	17,621	12,317
	17,621	12,317

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 30.06.2025 13:03